

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

X ~~Պատմություն~~ Դեկտեմբեր ամսին կարճաժամ հիւանդութիւնից յետոյ Բաղդադում վախճանուեց Պերճ Պռօշեանցը, հայոց վերջին կէս դարու այնքան բեղմնաւոր վիպագիրը, «Սօս և Վարդիթերի», «Հացի խնդրի» և ուրիշ բազմաթիւ վէպերի հեղինակը, որի գրուածներէն մեծադոյն մասի նիւթը իւր հայրենի Աշտարակ գիւղի հայ ժողովուրդն է:

Պռօշեանցի մարմինը ուղարկուեց Թիֆլիս, ուր Վանքի ա. եկեղեցուց կատարուեց նորա յուղարկաւորութիւնը դէպի Խօջիվանքի հանդստարանը:

Հայ ժողովուրդը բոլոր կերպով արտայայեց իւր յարգանքը դէպի այդ նշանաւոր գործիչը, բազմաթիւ պատգամաւորներ և պսակներ ուղարկելով Թաղման արտասովոր հանդիսին:

Հանգուցեալը բացի առանձին գրքերով տպուած վէպերից՝ մասնակցում էր գրեթէ բոլոր ազգային թերթերին, 'ի միշի այլոց աշխատակցում էր «Լուծային» և մենք խորին կերպով համակուած մեր քանքարաւոր աշխատակցի մահով՝ մեր վիշտն արտայայտեցինք հետեւեալ նամակով յանուն Թաղման կարգադրիչ մասնաժողովին.

«Խմբագրութիւնս խորապէս վշտացած ազգային վիպասան և իւր համակրելի աշխատակից Պերճ Պռօշեանի մահուամբ՝ յայտնում է իւր առ ի սրտէ ցաւակցութիւնը և որոշել է պսակի փոխարէն յանուն Պռօշեանի հիմնուելիք զրադարանին նուիրել «Լուծային» 12 տարուայ բոլոր համարները: Թաղման հանդիսին խմբագրութեանս կողմից ներկայ է լինելու Վարդգէս Աղանեանը»:

X ~~Պատմություն~~ Հին գործիչները մէկը միւսի ետեից անցյալտանում են, յոժերը պակասում, բռնում են արդեօք նոցա փոխարէն նորերը՝ դժուար է ստել. երեկ Պռօշեանը թողեց աշխարհը, այսօր էլ Սմբատ Շահաղիղեանը, «Լեւոնի վշտի» քանքարաւոր հեղինակը, բայց որ զուղաղիպական է՝ երկուսն էլ Աշտարակցի, երկուսն

էլ դադարեցանք և հայեացքներով շատ նման մէկմէկու: Հայ ժողովուրդը, սուտ չէ ասած, թէ դիպէ թաղել. թէ մէկին և թէ միւսին թաղեց արժանաւորապէս: Խմբադուլութիւնս իւր վիշտը միացնում է հայ հասարակութեան դժբաղդ թախիծին տաղանդաւոր բանաստեղծի մահուան առիթով:

X ~~Ստոպ~~ „СТОП. ПОЧ.“-ը հաղորդում է, որ Կովկասի Փոխարքայութեան խնդիրը վերջացել է այս օրերս: Փոխարքայութիւնը վերացւում է: Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ կնշանակուի ղեկներով Ջարուբաւը, իսկ ղեկնորական մասինը ղեկնորայ Րէնէնկամպֆը:

X ~~Ստոպ~~ Կովկասեան Հայոց բարեգործական ընկերութիւնը, ինչպէս յայտնի է, Գալիցիին հրամանով սեղմուեց և վերածուեց Թիֆլիսի Հայոց բարեգործական ընկերութեան: Վերջինս օգտուելով ժամանակիս յարմարութիւնից՝ անցեալ տարի խնդրամատոյց էր եղել ներկայ Փոխարքայ կոմս Վօրոնցովին, որ վերադարձնէ իրեն նախկին կանոնադրութեան շնորհած արտօնութիւնները և վերակոչուի ընկերութիւնը Կովկասեան Հայոց Ուրախութեամբ պիտի արձանագրենք այսօր, որ կոմսը յարգեց այդ խնդիրը և այս օրերս հաստատեց Կովկասեան Հայոց բարեգործական ընկերութեան լիովին կանոնադրութիւնը:

X ~~Ստոպ~~ Յունուարի 25-ին ուրբաթ երեկոյեան «Աղբիւր» մանկական ամսագրի 25 ամեակի առիթով՝ նորա խմբագիր պ. Տ. Նաղաբեանցի հրաւերով «Աղբիւր-Տարազի» խմբագրատանը կայացաւ նուազահանգէս՝ բաղմամբիւ հրաւիրեալների ներկայութեամբ: Մտտ թերթերի խմբագրութիւններից ներկայ էին սլաւոգամաւորութիւններ՝ 25 ամեակը շնորհաւորելու և մատուցուեցան անխնջ և տոկուն խմբագրին բաղմամբիւ շնորհաւորական ուղերձներ: «Լուծայ»-ի խմբագրութիւնն ևս իւր խմբագրով և երկու աշխատակիցներով ներկայ գտնուելով նուազահանգէսին՝ խմբագրութեան ուղերձը մատուցին պ. Նաղաբեանին:

Այդ ի հարկէ յօբելեան չէր, այլ միայն մի յարգանք 25 ամեայ թերթի գոյութեան. իսկ յօբելեանի և «Աղբիւր-Տարազ» թերթերը ապահովելու համար նուազահանգէսի վերջը մի քանի առաջարկներ եղան հանդիսականների կողմից, որ ցանկալի էր տնշուշտ իրականացած տեսնել:

Բոլոր հրաւիրեալները սիրալիր կերպով հիւրասիրուեցան պ. Նաղաբեանի կողմից թէյով և քաղցրեղէնով:

X ~~Ստոպ~~ Բաղուի Հայոց Կուլտուրական միութեան ճիւղեր են բացուել մի քանի հայաբնակ վայրերում, օրինակ

Էջմիածին, Երևան և այլն. և ինչպէս մեզ հաղորդում են Բաղուխի, շուտով բաժանմունքներ կբացուեն նաև մի քանի այլ քաղաքներում:

Ս. Էջմիածնից մեզ դրում են, որ առ այժմ ճեմարանում հանգստութիւն է տիրում. շնորհիւ տեսուչ պ. Մինաս Բերբերեանի կամաց-կամաց բարձրանում է նա ընկած վիճակից: Այդ դուր չէ դալիս Էջմիածնի և դրսի մի քանի մութ անձերին, որոնք բոլոր միջոցների դիմում են՝ ճեմարանի հանդիսար վրդովելու համար: Ըստ երևութիւն աշակերտութիւնը և ուսանողութիւնը հասկացել են այս խաղը և այլ ևս չի ուղղւում թակարդը ընկնել: Աշակերտութիւնը ուղղւում է աշակերտութիւն անելու—Ամենալու պատիժը՝ բանտարկունների համար:

Հային յատուկ անհանգիստ բնաւորութիւնը բուռն կերպով երևան է եկել և Պարսկաստանի մի անկիւնում—Ջուղայում: Թէպէտ ոչ մի տեղ էլ պակաս դեր չէ կատարում այդ պատմական յատկութիւնը:

Մեզ ուղարկուած է Ջուղայի Ամենափրկչեան վանքի տպարանում տպած մի «արձանագրութիւն» և «աւանայ պատասխան», որոնցից երևում է, որ Պարսկաստանում պաշտօնավարող երկու վարդապետներ—Բաղրատ վարդ. Վարդադարեանը և Խորէն վ. Տէր. Վարդանեանը իրենց անբարեացակամ յարաբերութիւններով միմեանց հետ՝ պառակտում են առաջացրել Ջուղայի ու Համադանի հայ նահապետական բնակչութեան մէջ: Այդ տպած թերթիկները երկսեռ զպրօքների հոգաբարձութեան կողմից հրատարակուած պատասխանն ու հրաւիրած ընդհանուր ժողովի որոշումն է, որոնք պաշտպան են հանդիսանում առաջին և պատապարտում երկրորդին: Սուկայն մենք ստիպուած ենք մեր կարծիքը վերապահել՝ դործին հանգամանքօրէն ժանօթ չլինելով:

Յուշուարի վերջերին թիֆլիսում վախճանուեց մեր ականաւոր հայերից մէկը—Միքայէլ Յ. Թամաճեանցը, որ յայտնի էր իւր մաքուր և դադափարական դործունէութեամբ: Հանդուցեալը երկար տարիներ վարում էր քաղաքիս Առևտրական բանկի կառավարչի պաշտօնը և միաժամանակ ծանակցում էր աղջային բոլոր նշանաւոր գործերին: Թամաճեանը յատուկ սիրահար էր հայադիտութեան և ժողովում էր հայութեան վերաբերեալ ամեն տեսակ հնութիւններ: Իննսնական թուականներին նա իւր տանը ժողովներ անելով՝ խմբադրում էր մի կանոնադրութիւն թիֆլիսում հայկական թանգարան հիմնելու:

Ժողովներին մասնակցում էին պ. Կ. Կոստանեանը, հանգ. Ա. Երիցեանը և Թերթիս խմբագիրը. և դեռ նորա այս զեղեցիկ դիտաւորութիւնը չիրականացած՝ Լրկու մեծ դժբաղատութիւն միմեանց ետևից քայքայեցին նորա առողջութիւնը և ստիպեցին պաշտօնը թողնել ու Եւրոպա տեղափոխուիլ. վախճանուեց նրա ամուսինը՝ ա. Լիդիան, որ նոյնպէս հասարակական լաւագոյն գործիչներից մէկն էր, ծանր հիւանդացաւ ինքը Միքայել Իվանիչը:

Եւրոպայում փոքր ի շատէ վերականգնելով իւր առողջութիւնը՝ Թամաձեանը ստանձնեց Փարիզի ռուսական դրպրոցում ռուս լեզուի և արևելագիտութեան դասերը և այնտեղից աշխատակցում էր տեղւոյս Թերթերին, ՚ի միշի այլոց և «Լուծային», փոքրիկ մատենախօսական յօդուածներով:

Վերջերս նորա հիւանդութիւնը դորանալով՝ վերջ տուեց նորա բազմարդիւն կեանքին:

X ~~Ստալին~~ Բաղուի Կուլտուրական միութիւնը խնդրել է Կովկասեան Փոխարքայից Թոյլ տալ իրան՝ հանգանակութիւն բանալ ամեն կողմ՝ Վերջ չայաստանիի հեղինակ Խաչատուր Աբովեանի անուան արծառ կանգնելու համար:

X ~~Ստալին~~ «Մշակը» հաղորդում է, որ այս տարի լրանում է պ. Շիրվանդադէի 25-ամեայ գործունէութիւնը և առաջարկում է յօրելեանը տօնել: Շտապում ենք յայտնել, որ դեռ անցեալ տարուանից խմբագրութիւնս յանձնարարել է իւր աշխատակիցներից մէկին զրել մեր տաղանդաւոր աշխատակից զրական գործերի մասին մի ընդարձակ մատենախօսակծոն յօդուած նորա 25-ամեակի առիթով: Մենք կվերադառնանք այս խնդրին:

X ~~Ստալին~~ Հանգ. Կաթողիկոսը դպրոցական գործիչների համար կարգադրութիւն էր արել դանադան ժամանակ՝ կոնֆակներով: Հրամայել էր Ներսիսեան դպրոցին Թոշակ տալ Ֆրանսերէնի ուսուցիչ յալանի դրագէտ պ. Յարոյին և Յովնանեսոն ուսուցնարանի տեսուչ՝ Նախկին «Մուրն» ամսագրի խմբագիր-հրատարակիչ պ. Լ. Սարգսեանցին. այդ երկու կոնֆակներն էլ իւր ժամանակին չկատարուեցան պատշաճաւոր հոգաբարձութիւնների կողմից: Այժմ Մշակը հաղորդում է, որ պ. Սարգսեանը դատարանի է դիմել իւր իրաւունքը պաշտպանելու և ռոճիկը ստանալու համար, իսկ մենք էլ լսել ենք, որ պ. Յարոն դատ է սկսում Ներսիսեան Դպրոցի Հոգաբարձութեան դէմ, որ չէ կատարել կաթողիկոսի իւր մասին արած կարգադրութիւնը:

X ~~Ստալին~~ Եգիպտոսում սպանուել է «Մշակի» երկարամեայ Թղթակից Արփիար Արփիարեանը, որի գործունէութեան մա-

սին այսօր ընթերցողը կդանէ տեղեկութիւններ «Լուծայի» մէջ «Սմալիկայի հայերը» յօդուածում: Յաւուած ենք, որ 20-դ դարում, կարծիքների և հայեացքների ազատութեան այս դարում, ժառանգութիւն ենք ստացել վայրագ սպանութիւններ, հասել ենք այն միջնադարեան օրերի՝ երբ մի նշմարութիւն տեսելու համար մարդու լեզուն էին կարում և մարմինները դաղում: Ամօթ...

X ~~ՍՄԱԼԻԿԱՅԻ~~ Բաղուի Հայոց Կուլտուրական միութեան հրատարակութեամբ թիֆլիսում ծածուկի տակ է Խաչատուր Աբովյանի Վէրք հայաստանին և այս օրերս լոյս կտեսնի: Այդ հրատարակութեան համար պ. Դ. Աւան Իւզրաշեանը նուիրել է մի հազար ռուբլի:

X ~~ՍՄԱԼԻԿԱՅԻ~~ Յունուարի 28-ին թիֆլիսի Հայ Թատրոնը առնեց իւր դայութեան 50-ամեակը: Արտիստիք Թատրոնում տուած հանգիստաւոր ներկայացմանը, ուր խոնուել է մեծ բաղմութիւն, այն հաստատութիւնները, որոնք հրաւերներ էին ստացել, ուղարկել են իրանց ներկայացուցիչներն ու պատգամաւորութիւնները, որոնք հերթով ուղերձներ են կարդացել իրանց ուղարկող հաստատութիւնների կողմից:

X ~~ՍՄԱԼԻԿԱՅԻ~~ Վերջին օրը ստացանք «Արարատ» ամսագրի յունուարի դիրքը, որ հրատարակուած է Գարեգին վարդ. Յովսէփեանի խմբագրութեամբ. ամսաթերթը զգալի կերպով քարքերուած է նախկին «Արարտաի» թէ՛ ծաւալով, թէ՛ արտաքինով և թէ՛ բովանդակութեամբ: Իսկոյն երևում է, որ խմբագրուած է մի հմուտ և յուրջ անձնաւորութեան ձեռքով:

X ~~ՍՄԱԼԻԿԱՅԻ~~ Եղբորք Ալէքսանդր և Միքայէլ Նաղարեանց ի լիշատակ իրենց հանդուցեալ եղբօր դուստր Մարիամի՝ մի հարիւր ռուբլի յանձնեցին Թերթիս խմբագրին յօդուա կովկասահայ սովետների Խմբագրութիւնս այդ հարիւր ռուբլին անցեալ դեկտ. 13-ին յանձնեց Թեմիս սրբ. Առաջնորդին՝ Նպատաստմատոյց Յանձնաժողովին հասցնելու համար:

X ~~ՍՄԱԼԻԿԱՅԻ~~ Հետաքրքրական նորութիւն է մեր քաղաքի համար լլի կանանց զրամարկիւնք (կասսա) լրանալը: Մինչև այսօր բացուած են մօտ 8 զամադան կասսաներ և ինչպէս տեսած են աւելի քան 50 այդպիսի կասսաներ հիմնելու խնդիրներ են տուած նահանգապետին: Կասսան պահուած է անդամների անդամաւանքներով, իսկ իւրաքանչիւր ազատուող ծննդական տաճում է իւր վնարածի կրկնապատիկ դուժարը: Կասսաները մեծ լազոյութեամբ գործում են այսօր, բայց թէ ի՞նչ կլինի նոցա վախճանը, երբ փոխանակ 8—10-ի՝ գործեն 50 և աւելի:

կասաներ, կարծում ենք շատ պարզ է—գրեթէ բոլորն էլ միանգամից կփակուեն, նիշա պնպէս, ինչպէս որ հոկտեմբերի 17-ի մանիֆէստից յետոյ՝ հայ լրագիրները:

ՄԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Անցեալ տարուայ վերջերին Վանքի ա. եկեղեցում կայացաւ նոր երեցփոխանի և 3 հոգաբարձուների ընտրութիւն: Ժողովում Վանքի 1804 ընտրողներից ներկայ էին 29 հոգի, որոնք և կատարեցին ընտրութիւնները:

Այդ ժողովի մասին մի լուր կար ստուգած «Վստակ» լրագրում, ուր, ի միջի այլոց ասուած էր, թէ ես ցանկանում էի ընտրուել հոգաբարձու, բայց հէնց որ տեսայ միաձայն չեն ընտրում, այլ պիտի ենթարկուիմ քուէարկութեան՝ հրաժարուեցի:

Այս լուրը զուրկ է ամենայն ճշմարտութիւնից. իրողութիւնն այս է, որ ժողովականներից մէկը և յաւկապէս պ. Օբրդեանը առաջարկեց, որ հոգաբարձուներից մէկը ցանկալի էր քահանաներից ընտրել և մասնաճիւղ արին ինձ վրայ: Ես դորան պատասխանեցի, թէ «բացէ ի բաց հրաժարուում եմ որեւէ պաշտօնի քուէարկուելուց» և իմ կողմից առաջարկեցի ընտրել մեր աւագերէցին:

Ո՞րտեղից «Վստակ» պ. լրատունն հնարեց վերոյիշեալ անհեթեթ սուտը՝ չդիտեմ. բայց ես կարծում եմ աւելի լաւ կանէր պարօնը, եթէ դորա փոխարէն պարզէր հասարակութեան, թէ ինչպէս 1804 քուէ ունեցող մի ծխից՝ 29 հոգով կայացած ժողովում ինն ձայն ստացողներից մէկը, դիցուք հէնց պ. Տիգրան Յովհաննիսեանը ընտրուած համարուեց հոգաբարձութեան պաշտօնի:

Վանքի ա. եկ. ծխական Գիւտ ա. ք. Աղանեանց

ԻՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՍԻՒԱՆՆԵՐ

- ✕ ԲԱԳՈՒ. Ա. Տ.-Գ.—Ձեր բանաստեղծութիւնը կտպուի միւս համարում:
- ✕ ՔԻՇՆԵԻ. Կրպէ.—Ձեր յօդուածը կտպուի. մենք մեղաւոր չենք, որ ուշանում է: Հայ մամուլի վիճակն է այդպէս:
- ✕ Ն.-ԲԱՅԱՏՐԻՏ. Սանդաղէ.—Ձեր վէպի մասին որոշում կանէ խմբադրութիւնս շատ շուտով. և այդ մասին նամակ կտանաք: